Digitally signed by
LILIT SARGSYAN 5211930223
Date: 30.06.2025 22:27:05

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

# ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 29-01-2025 թ. որոշմամբ**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**
**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի`** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ Փ. 5 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.916939 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2016-07-14 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 00156064 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)60655885 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | vwfa.am |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | info@vwfa.am |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Զարուհի Մուրադյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 16 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | 0 | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | 0 | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | Կոլլեկցիոն, ցուցադրական այգիների և տնկարանի պահպանում | 4,994,810 |
| | Խաղողի տնկարկների ռեեստրի համակարգի ստեղծում և կիրարկում | 1,260,927 |
| | Պրովայն 2024 ցուցահանդես | 28,017,544 |
| | Մոնդիալ 2024 մրցույթ | 3,756,480 |
| | Օ ԱՅ ՎԻ-ի նախարարական հանդիպման մասնակցություն | 270,469 |

| | | |
|---|---|---|
| | Վինեքսպո Նյու Յորք 2024 ցուցահանդես | 77,747,286 |
| | Մոնդիալ 2024 մրցույթի մասնակցությում, Լեոն, Մեքսիկա | 189,929 |
| | Արմվայն Մոսկվա 2024 ցուցահանդես | 10,740,590 |
| | WTO կոնֆերանսի հյուրերի հյուրընկալություն | 2,133,660 |
| | Ուսուցողական այց Ֆրանսիա | 854,807 |
| | Րոադ Շոու Բրյուսել, Ամստերդամ, Ցյուրիխ | 41,776,974 |
| | Լրագրողների և գնորդների այց ՀՀ | 22,823,729 |
| | Միացյալ Թագավորությունում համտեսների կազմակերպում | 14,036,272 |
| | Վիվինո հավելվածում հայկական գինիների ներկայացում | 10,382,550 |
| | Վինեքսպո Փարիզ 2025 ցուցահանդես | 34,707,003 |
| | Մոնդիալ 2025 մրցույթ | 9,784,320 |
| | IWSC 2024 մրցույթ | 2,518,120 |
| | Պրովայն 2025 ցուցահանդես | 31,822,271 |
| | Ֆուդեքս 2025 ցուցահանդես / Ճապոնիա | 14,071,998 |
| | Բեռլինում գործող պահեստի համար գինիների բեռնափոխադրում | 1,245,000 |
| | Գերմանիայում համտեսի կազմակերպման նպատակով գինիների բեռնափոխադրում | 273,000 |
| | Համտեսի կազմակերպման նպատակով գինիների ձեռքբերում | 111,544 |
| | Լուսանկարների ձեռքբերում | 720,000 |
| | Կանոնադրական նպատակների համար | 189,348,622 |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Դուալ համակարգերի ներդրում գինեգործական ընկերություններում | 5,562,060 |
| | Միացյալ Թագավորությունում համտեսների կազմակերպում | 3,712,507 |
| | Կանոնադրական նպատակների համար | 22,000,000 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | | |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | | |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | | |

| | | |
|---|---|---|
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Դուալ համակարգերի ներդրում գինեգործական ընկերություններում | 7,540,988 | |
| green week 2024 | 1,742,075 | |
| Կոլլեկցիոն, ցուցադրական այգիների և տնկարանի պահպանում | 4,994,810 | |
| Խաղողի տնկարկների ռեեստրի համակարգի ստեղծում և կիրարկում | 1,260,927 | |
| Պրովայն 2024 ցուցահանդես | 38,252,167 | |
| Մոնդիալ 2024 մրցույթի մասնակցույթում, Լեոն, Մեքսիկա | 3,756,480 | |
| O ԱՅ ՎԻ-ի նախարարական հանդիպման մասնակցություն | 270,469 | |
| Վինեքսպո Նյու Յորք 2024 ցուցահանդես | 77,747,286 | |
| Մոնդիալ 2024 մրցույթի մասնակցույթում, Լեոն, Մեքսիկա | 189,929 | |
| Արմվայն Մոսկվա 2024 ցուցահանդես | 10,740,590 | |
| WTO կոնֆերանսի հյուրերի հյուրընկալություն | 2,133,660 | |
| Ուսուցողական այց Ֆրանսիա | 854,807 | |
| Րոադ Շոու Բրյուսել, Ամստերդամ, Ցյուրիխ | 41,776,974 | |
| Լրագրողների և գնորդների այց ՀՀ | 22,823,729 | |
| Միացյալ Թագավորությունում համտեսների կազմակերպում | 17,748,779 | |
| Վիվինո հավելվածում հայկական գինիների ներկայացում | 10,382,550 | |
| Վինեքսպո Փարիզ 2025 ցուցահանդես | 34,707,003 | |
| Մոնդիալ 2025 մրցույթ | 9,784,320 | |
| IWSC 2024 մրցույթ | 2,518,120 | |
| Պրովայն 2025 ցուցահանդես | 31,822,271 | |
| Ֆուդեքս 2025 ցուցահանդես / Ճապոնիա | 14,071,998 | |
| Բեռլինում գործող պահեստի համար գինիների բեռնափոխադրում | 1,245,000 | |
| Գերմանիայում համտեսի կազմակերպման նպատակով գինիների բեռնափոխադրում | 273,000 | |
| Լուսանկարների ձեռքբերում | 720,000 | |
| Համտեսի կազմակերպման նպատակով գինիների ձեռքբերում | 111,544 | |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 530,687,428 | |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 337,469,476 | |

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ___5___ էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ________________________________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ________________________________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

***«Հայաստանի խաղողագործության և գինեգործության» Հիմնադրամ***
***2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ***

| | Ծնթ. | 31.12.2024թ. հազար դրամ | 31.12.2023թ. հազար դրամ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 1 847 | 3 022 |
| | | **1 847** | **3 022** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 5 | 636 | 607 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 6 | 10 190 | 1 238 |
| Դրամական միջոցներ | 7 | 46 846 | 38 443 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | | | |
| | | **57 672** | **40 288** |
| | | **59 519** | **43 310** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **Զուտ ակտիվներ** | | | |
| Կուտակված արդյունք | | - | - |
| | | - | - |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 8 | 1 847 | 3 022 |
| | | **1 847** | **3 022** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 8 | 35 830 | 33 986 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 9 | 13 771 | 271 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 147 | 130 |
| Պահուստներ | | 7 924 | 5 901 |
| | | **57 672** | **40 288** |
| | | **59 519** | **43 310** |

*Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:*

# ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

***«Հայաստանի խաղողագործության և գինեգործության» Հիմնադրամ***
***2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար***

| | Ծնթ. | 2024թ.<br>հազար դրամ | 2023թ.<br>հազար դրամ |
|---|---|---|---|
| Հասույթ | 10 | 8 494 | 1 423 |
| Վաճառքի ինքնարժեք | 11 | (7 471) | - |
| **Համախառն շահույթ** | | **1 023** | **1 423** |
| Շնորհից եկամուտ | 8 | 536 183 | 197 764 |
| Այլ եկամուտ | | 412 | 461 |
| Ծրագրային ծախսեր | 12 | (537 189) | (200 512) |
| Այլ օգուտ/վնաս | | (842) | (108) |
| Ֆինանսական եկամուտ/ծախս | | 559 | 1 164 |
| **Շահույթ մինչև հարկումը** | | **146** | **192** |
| Շահութահարկի գծով ծախս | | (146) | (192) |
| **Տարվա զուտ շահույթ** | | - | - |
| **Այլ համապարփակ եկամուտներ** | | | |
| **Տարվա համապարփակ արդյունք** | | - | - |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 27-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

**Զարուհի Մուրադյան**
**Գործադիր տնօրեն**

**Սոնա Մարկոսյան**
**Գլխավոր հաշվապահ**

*Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:*

# ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

***«Հայաստանի խաղողագործության և գինեգործության» Հիմնադրամ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար***

| | 2024թ. հազար դրամ | 2023թ. հազար դրամ |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Ստացված շնորհներ և նվիրատվություններ | 542 850 | 194 092 |
| Գործառնական այլ մուտքեր | 362 | 1 689 |
| Գնումների դիմաց վճարումներ | (335 105) | (82 702) |
| Վճարումներ աշխատակիցներին | (76 014) | (62 296) |
| Վճարումներ հարկերի և այլ վճարների գծով | (112 589) | (49 024) |
| Գործառնական այլ գործունեությունից ելքեր | (9 682) | (6 056) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **9 822** | **(4 297)** |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների ձեռք բերման գծով վճարումներ | (1 258) | - |
| Ստացված տոկոսային եկամուտ | 559 | 605 |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(699)** | **605** |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Վճարված շահաբաժիններ | | - |
| Վարկերի և փոխառությունների ստացում | | |
| Վարկերի և փոխառությունների մարում | | |
| Ֆակտորինգի գծով միանվագ վճար | - | |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | - | - |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր** | **9 123** | **(3 692)** |
| Փոխարժեքային տարբերություններ | (720) | 453 |
| Դրամական միջոցները տարեսկզբի դրությամբ | 38 443 | 41 682 |
| **Դրամական միջոցները տարեվերջի դրությամբ** | **46 846** | **38 443** |

*Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Ֆինանսական Հաշվետվություններ և**

**Անկախ Աուդիտորական Եզրակացություն**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
հաշվեփակված տարվա

**ԵՐԵՎԱՆ**
**Ապրիլ 2025թ.**

# Բովանդակություն


էջ

Անկախ աուդիտորական եզրակացություն 3

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 7

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 8

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 9

audit pro

Աուդիտ Պրո ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան
Խորենացի 26ա

+(374) 12 222 322
www.auditpro.am

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության» հիմնադրամի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվետակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ*

***«Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին***

***Կարծիք***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

***Կարծիքի հիմք***

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

***Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը***

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու

կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախաագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:
- գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական

հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

**27 հունիսի 2025թ.**
**«ԱՈՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ**

**Արսեն Խաչատրյան**
**Տնօրեն**

**Ավետ Ավետիսյան**
**Աուդիտի ղեկավար**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 22:26